

զուց հաստատուած և վերև յիշուած ժողովական կանոններով և մասնաւոր հոգատարութեամբ հայ վանօրէից:

Ռշտունեաց վանքի ուրկանոցը Ս. Քաղաքին ամենէն հին և միակ հաստատութիւնն էր. միայն 1047 ին արաբ տիրապետութեան օրով, Ս.յն-Սելովամի մէջ հաստատուած էր ընդարձակ հիւանդանոց մը (Պիմարիտան), ուր կային թոշակաւոր բժիշկներ և կը դարմանէին ամէն կարգի բազմաթիւ հիւանդներ: Նոյն Պիմարիտանի ծախքը կը հոգար Երուսաղէմ քաղաքը, ինչպէս կը ծանօթագրէ պարսիկ ուղեղիր Նասիրի Սուրուլ (Տէ'ս Palestine Pilgrims, Text Society, Vol. IV. էջ 26): Պաշակրաց ժամանակն ալ, քաղաքին հիւսիսային կողմը, Ս. Ստեփանոսի դրան մօտ, շինուած էր ուրկանոց մը, որ, 1171 ին, գլխաւորապէս կը հոգացուէր մեծագումար նուէրատուութեամբ Երուսաղէմի թագաւոր Ամորիի, որուն զաւակն ալ վարակուած էր բորոտութեամբ (Տէ'ս The Latin Kingdom of Jerusalem, էջ 196): Մեկիսանդ թագուհին 1159 ին, Երուսաղէմի վանօրէից բոլոր ուրկանոցներուն նուիրած էր հաստիճարի հողեր (Տէ'ս R. B. 1926, էջ 276): Մեկիսանդ (* 1160) ի մօրէ հայ էր, զուստը Պաղատին Բ.ի և կինը Երուսաղէմի Ֆուլք թագաւորին, բարեգործութիւններով նշանաւոր հանգիսացած և թաղուած է Գեթսեմանիի Ս. Կուսի տաճարի աստիճաններուն աջ կողմը, ըստ Պատմութեան Տիւրքի Կրիստի (XVII, 32):

Ըստ այսմ, Երուսաղէմի օտար ուրկանոցները վերոգրեալ միջոցներով կը մատակարարուին. իսկ մեր Ռշտունեաց վանքն ու անոր ուրկանոցը, սկիզբէն մինչև ԺԲ. դար: կը հոգացուէր այն եղանակաւ և միջոցներով զոր վերև նկարագրեցինք: Պաշակրաց հեռանալէն յետոյ (1187), անծանօթ կը մնան մեզ նոյն հաստատութեան մատակարարութեան միջոցները. բայց սա պարազան յայտնի է թէ հայկական վանքերուն մեծագոյն մասամբ քանդուելէն կամ բռնագրաւուելէն վերջ, նոյն ուրկանոցին հօղը ծանրացած է Ս. Յակոբայ վանքին միաբանութեան վրայ, և ա՛ն է որ մինչև 1875, քանդուած ուրկանոցին աւերակաց հողակոյտին վրայ թափառող և լքեալ ուրուկներուն օրական հացը կը հայթայթէր, մինչև որ անոնք այլուր փոխադրուեցան (Տէ'ս Ժմնկոր. Պատմ. Երազմի. Ա. հար. էջ 90): Այս դժբախտներուն փոխադրութեան առիթով, կառավարական ուրկանոցներ շինուեցան պետական ծախքով Ռէմէ և Նապուս քաղաքներուն մէջ (Տէ'ս վերը, Dict. Bibl. էջ նոյն):